ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ#1

Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի անվանումը՝ «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում»
Պայմանագրի անվանումը՝ «Վայոց ձորի մարզային հիվանդանոցի կառուցման շինարարական աշխատանքներ»
Ծրագիր No.: P175023
ՀՆՀ No.՝ CR5/AF/RFB/B-W/001-21

Հարգելի Հայտատուներ,

Ի պատասխան, 2021թ-ի Մարտի 11 ARMEPS համակարգի միջոցով ստացված հարցումների, կից Ձեզ ենք ներկայացնում հետևյալ պարզաբանումները վերոնշյալ մրցույթի վերաբերյալ («Մրցույթի տվյալների ցանկ» (Բաժին II) ՀՀ 7.1).

1. *Հարց.* Համատեղ գործունեությամբ մասնակցելու դեպքում համանման պայմանգիրը կարո՞ ղ է ներկայացնել մեկ անդամը/, ***2015թ հունվարի 1-ից, մեկ պայմանագիր առնվազն՝ 1,635,000,000 ՀՀ դրամ արժեքով, կամ երկու պայմանագիր յուրաքանչյուրն առնվազն՝ 817,500,000 ՀՀ դրամ արժեքով***,/, համաձայն՝ հրավերի որակավորման բաժնի 4.2/ա/ ենթակետում նշված ՀՁ-ի դեպքում՝ <<Բոլոր կողմերը միասին >> ***պետք է բավարարեն պահանջը:***
Եվ,արդյո՞ք՝ մեկ անդամի կողմից ներկայացվող պայմանգիրը կլինի ընդունելի գնահատող հանձնաժողովի կողմից և հիմք չի հանդիսանա հայտի մերժման համար:

   Պատասխան. Հայտեր ներկայացնելու հրավերի III-րդ Բաժին «Գնահատման և որակավորման չափանիշներ-3.Որակավորում»՝ «4.2(ա) Հատուկ շինարարական և պայմանագրի կառավարման փորձ» կետի «Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ Մտադրվող)» դաշտում գրված է «Պետք է բավարարի պահանջը[12]», իսկ 12-րդ ծանոթագրությունը պարզաբանում է «*ՀՁ-ի դեպքում անդամների կողմից ավարտված պայմանագրերի արժեքը չպետք է գումարվի՝ առանձին պայմանագրի նվազագույն արժեքի պահանջի կատարումը որոշելու համար: Հակառակը՝ յուրաքանչյուր անդամի կողմից իրականացված յուրաքանչյուր պայմանագիր պետք է բավարարի առանձին պայմանագրի նվազագույն արժեքին, որը պահանջվում է առանձին կազմակերպությունից: Որպեսզի որոշվի, թե արդյոք ՀԳ-ն համապատասխանում է պայմանագրերի ընդհանուր թվի պայմանին, պետք է գումարվեն միայն բոլոր անդամների կողմից իրականացված պայմանագրերը, որոնցից յուրաքանչյուրը պետք է լինի պահանջվող նվազագույն արժեքին հավասար կամ դրանից ավել»:*
   Համատեղ գործունեությամբ մասնակցելու դեպքում միայն մեկ անդամի կողմից ներկայացվող պայմանգիրը ընդունելի չէ:

2. *Հարց.* Համատեղ գործունեությամբ մասնակցելու դեպքում, գնահատող հանձնաժողովի կողմից ընդունելի կլինի, և մերժման հիմք չի հանդիսանա այն,որ ՀՁ գործընկերներից մեկը ունենա նմանատիպ պայմանգիր՝ 3,909,640,779 ՀՀ դրամի չափով , իսկ մյուս գործընկերը՝ 712,576,640 ՀՀ դրամ:

Պատասխան. Նշված մոտեցումը ընդունելի չէ, քանի որ համատեղ գործունեությամբ մասնակցելու դեպքում, յուրաքանչյուր անդամի կողմից պետք է ներկայացվի առնվազն մեկ պայմանագիր առնվազն՝ 817,500,000 ՀՀ դրամ արժեքի:

Հարգանքով,

Քրիստինե Ղամբարյան
Գնումների մասնագետ
ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
ՀՀ, ք. Երևան 0051, Կոմիտասի 49/4, 5-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 29 75 36, (+374 10) 29 75 37
Էլ. հասցե՝ info@healthpiu.am, kristine.ghambaryan@healthpiu.am
Վեբկայք՝ www.healthpiu.am